


Միշտ իր խորքէն չարատանջ յոգնում և երբեք չհանգչող այս ուղիները Գրիգորի հոգւոյն, բացում գիրք մ'է ահա բոլորիս առջեւ, բայց ո՞վ է որ կը հասկնայ զայն այնպէս, ինչպէս ինքը՝ հեղինակը։ Իր հոգեկան ապրումներուն պէս բարդ եւ անոր բոլոր էջերը, կրկնում ու երեքնում իմաստներով, որոնց մէջ առգն ու քերէ ժպիտներու նշանակող ձառագայթները կը զոգախառնուին իրարու, դարձնարձիկ ինքնագաւարտներով լսում, պատմում, շեշտում, առանց բնաշ հանգիստ առնելու իր վազքին մէջ, հեշ ի հեշ, անսպասօրէն մտրակում դէպի սահմանը իր փնտռած ազատութեան։ Այս անհա դժուարութիւնը Նարեկեան աղօթամատենին ներքին ծալքերուն մէջ մխրձելու, զայն վերլուծելու, ցոյց տալու թէ կայ արդեօք հոն կարգ ու ճարգիր, թէ ընդհակառակն իշխանաւոր Բան-երը նկատուելու եւ պարզապէս օրական կամ պարբերական արձանագրութիւններ աղօթողին արամադրութիւններուն, վիճակներուն, որոնցմէ անցած է ան իր կեանքի մէկ շրջանին։ Մը է, և ինչպէս բացատրել գրական արժանիքը այդ գործին, ամբողջութեան յոսքի՞ն թէ մանրամասնութիւններուն մէջ, ի՞նչ տեսակ է այդ գրական գեղեցիկը, որքան կը համաձայնի ներկայ գրական ձառակին ու պահանջին։ Որոնք եւ պատճառները իր մթին արտայայտութիւններուն, կը զգացոյ՞ հարկը ձեռագրական համեմատութիւններու՝ բուն բնագիրը վեր հանելու։ արձնք եւ իր շեղումն և արտեւտին յատկանիշերը, կայ ներքին ամանակ մը ազատ կամ չարածոյ, ինչո՞վ և որ մասով զուտ հայեցի դրոշմ կը կրէ այդ գործը, կարելո՞ւ է մտածել օտար ներշնչումի մը և կամ ազդեցութեան մը վրայ...։ Այս բոլորը և աշխիւ մի առ մի ուսումնասիրուելէ վերջ (ցարդ եղած քննութիւնները այս հարցերուն՝ աշխիւ ընդհանուր բնոյթ ունեցած եւ), անտարակոյս աշխիւ լոյս, աշխիւ իրական պատկերացում մը պիտի ունենանք մեր ժ. դարու այս մեծ Մտքին շուրջ։

Նարեկեան յոբելանսը թող ըլլայ գրգիռ մը Նարեկացիի անգոյզական գործին խորագոյն ուսումնասիրութիւններու։

Հ. ՄԵՍՐՈՊ ԶԱՆԱՇԵԱՆ



ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՒ ՆԱՐԵԿԸ

Տարւոյս 23 Նոյեմբերին, Ս. Ղազարու Հայկական Ժամարանին մէջ՝ ակադեմիական միտով վերամտորոգուեցաւ յիշատակը Գր. Նարեկացիի յոյժեղ հազարամեակին։ Այդ առթիւ Հ. Վիրեղ Վ. Քիպարեան-Կատարեց հետեւեալ բանաստեղծութեան մկարագիրը Նարեկացիի գործին։

Այս տարի բովանդակ ազգը կը տօնէ Գրիգոր Նարեկացիի ծնունդի հազարամեան։

Գրիգոր մեր հին գրականութեան քերթողական ամէնէն հօր եւ ինքնատիւ միտքն է, որ իբր խորհրդապաշտ (mystique) քերթող, ձգած է Նարեկի մէջ իր կրօնական զգացողութեանց եւ փորձառութեանց պատմութիւնը բանաստեղծական այնպիսի զգեստաւորութեամբ, որ ոչ միայն տօնադրին, այլ համամարդկային ամէնէն չքեղ քերթողական արտազրութիւններէն է։ Հոն երկինք ու երկիր, բնութիւն եւ հոգեղէն էակներ, ազգաւոր իրեր ու տիեզերական կեանքը զիրար կը թափանցեն. ուր սակայն ամէնէն շատ հեղինակին անձը եւ հոգին, հեղինակին դէպի անհունը տածած սէրն է որ կ'ապրի, կը թեւածէ, կ'ըլլէ. անհունը քերթողին մտապատկերներուն եւ տեսիլներուն մէջ, բայց մանաւանդ իր ձկնորդներուն, իր հոգեկան կեանքին եւ ձկնորդներուն փորձերուն մէջ։ Հեղինակն ալ խորազգած ու անկեղծ շեշտ մը կը դնէ իր այս հոգեկան ապրումները ու ներքին վիճակները նկարագրած ժամանակ, որոնք որքան որ փոխաբերութիւններով ու թանձրացեալ ձեւով կը պատկերացուին, բայց նպատակին անհունով շաղուիլ, անհունով լիանալ է. կարծես աստուածայինին հպումն է որ կը զգացուի։ Արդէն Shelley կը հաւաստէ որ բանաստեղծութիւնը աստուածայինին Յայտնութիւնն է հանձարին մէջ։ Այս սահմանումը գոցէ ամէնէն աւելի կը պատշաճի խորհրդապաշտ քերթողներու բանաստեղծութեան, զոր կարելի է նաեւ նկատել աստուածա-

յինին այցելութիւնը հանձարին՝ գեղեցկութեան ձեւին ներքեւ։

Գր. Նարեկացի նկատուած է խորհրդապաշտ բանաստեղծ մը։ Իրապէս իր մէջ ներհայեցողական կեանքը, հոգեկան գոյալիճակը կամ ծանօթութիւնը իր հոգեկան ամէնէն կեղրոնական ու հիմնական կորիզն է, որու սակայն սերտօրէն զօղուած է արտայայտութիւնը՝ այսինքն ընելը, ապրիլը։ Գրական ամբողջ գործն ալ՝ մանաւանդ Նարեկը, բխած է ներքին վիճակէ մը, կրօնական կեանքէն, իբր թէ բանաստեղծութեան խորհրդը իր գործին մէջ պայծառաւոր ու իմաստ մը ստանար գերբնական տեսիլի մը կամ յափշտակութեան լոյսէն։ Այս պատճառով ամէն ինչ Նարեկի մէջ զգայականէ առաջ պիտի ըսենք թէ հոգեկան իրականութեան հանդամանք ունի. հետեւաբար խոստովուել եւ մեռնող ոչ մէկ բան. բոլորն ալ՝ հոգեկան էութիւններ ու գոյալիճակներ, կը լուսաւորուին երկնային ճառագայթութեամբ իրենց արտաքին մթութիւններուն մէջ։ Պատկեր, արտաքին ձեւեր, դաշնակութիւն, կշռոյթ, ասոնք կարելի է նկատել լոկ նշաններ՝ պարզապէս արտայայտելու համար անձանքին։ Հոգեկան էութիւնն է որ կը կադմաւորէ այդ բանաստեղծութիւնը, իբր թէ Նարեկ եթերային քերթուած մ'ըլլար։

Այս կէտը ունէ խորհրդապաշտ քերթողի գրական գործին էական տարրն է ու անոր ծնունդ տուողը։ Իրենց բանաստեղծութիւնը զլիսաւորապէս ոգեկոչումն է Աստուծոյ եւ իրենց հոգւոյն միջեւ գոյապաշտ միութեան կեանքի փուլերուն եւ տեղի ունեցած դէպքերուն. չմոռնալ սակայն

որ իրենց մէջ ալ կը բարախէ մարդկային սիրտը եւ կ'արձագանդէ յոյսերու նուազը ու չեն պակսիր խռոված մթնոլորտի մը մէջ ներքին անձկութեանց ու պայքարներու պահերուն հետ, հրճուանքի լուսաշող վիճակներ եւ երանութեան թովչական ըզզացումներ։ Ասոնք սովորաբար կը ներկայացուին աշխարհայեցողութեամբ ու փոխարեւորութիւններով, որոնց տարրերը սակայն, այսպէս դոյն, պատկեր, ձայն, կշռոյթ, աւելի իրր թրթռացում ու զերզալի երեւոյթներ կը ներկայանան, ու բառերը մեղի կու տան մերթ երաժշտութիւն մը որ տեսակ մը միօրինակութեան ու անշարժութեան կը յանդի։ Իրապէս խորհրդապաշտ բանաստեղծութեան մէջ երեւակայութիւնը կը սնանի աւելի նօսրացած ու աննիւթականացած տեսիլներով, ու զգալի իրերէն եւ բնութեանէն բարձրանալով՝ կը զիմէ հոգեկանին եւ աստուածայինին։ Կերպով մը բանաստեղծութիւնը անդալտ ու աննիւթ մթնոլորտի մը մէջ կը զետեղէ. այսպէս է բանաստեղծութիւնը Յովհաննէս Խաչեանի մը մէջ, այսպէս է մանաւանդ Ruysbroekի մէջ։

Ընդհակառակն Գր. Նարեկացիի դրական գործին՝ զլիսաւորապէս Նարեկին մէջ, ըլլալով հանդերձ խորհրդապաշտ հեղինակի մը արտայայտութիւնը, մարդկային անձը՝ քերթողին մտեղէն անձը ոչ միայն ներկայ է, այլ օժտուած յորդաբոլի կենսունակութեամբ եւ զգայական ուժեղ խառնուածքով, զեզուն տապալին սիրով, որ կը սարսուռ թաքուն անդունդներու առջեւ։

Կրօնակիցները կը խնդրեն իրմէ որ բարեպաշտ ազօթքներ յօրինէ. ինքը անոնց կու տայ իր հոգւոյն պատմութիւնը, իր ներքին կեանքի տալիս, ուր ոչ միայն իր անձը ներկայ է ամէն էջի մէջ, այլ ներկայ է իր զգայարաններով, իր զգացողութիւններով, իր մարմինով. ներկայ է իր վայրաքարշ հակումներով, իր պայքար-

ներով ու անկումներով, ու այս բոլորին կը մօտենայ եւ կը դպչի դնելով երեւակայութիւն, յուզականութիւն, նկարչագեղութիւն. ամէն բանի կը նայի բանաստեղծի աչքերով, ամէն բան կը չօշափէ զգայարաններով, ամէն բան կը նկատէ թանձրացեալ ու զգալի ձեւերով, եթէ կ'ուզէ իրր նկարիչ-քերթող մը։ Եզական է իրերը տեսնելու, բայց մանաւանդ իրերը ու կեանքը զգալու եւ դատելու իր կերպը. եզական այդ դարուն, եզական այսօր ալ։ Չի կրնար զսպել իր ներքին յոյզերը եւ չարժումները. յուզում սիրոյ. յուզում անիրականացած տենչերէ ծագած. յուզում խարկանքներէ յառաջագայած. յուզում աստուածային շնորհքին չկարենալ համապատասխանելուն. ասկից տուայտանք, ցաւ, լքում, տաղնապ ուժգնորէն զգացուած ու երկարատեւ իր մէջ տարած. պէտք է ըսել որ իր անձն ալ կերտողը ու ձեւողը առանձնութեան հետ կ'ըլլայ ցաւը. ցաւը իր զիմադիծը ձեւած է, զինքը սնուցած ու մեծցուցած, զինքը փառքի առաջնորդած. արդէն հրճուանքէն աւելի ցաւը կը ճանչցնէ մարդը ու կը մեծցնէ, եւ կու տայ ապրելու զգացողութիւն։

Որով Նարեկի մէջ Գրիգորի դէմքը խորհրդապաշտ վանականի մը համեստ ու թանձր սքեմին ներքեւ հանդիսաւոր, հրակայական, բայց միաժամանակ ցաւազնոտ վեհութիւն մը կը ստանայ իր զիմերով, միքելանճելեան անդրիններուն նման. արդէն իր զրական գործին մէջ ալ կարելի է տեսնել իտալ արուեստագէտին հանճարին ուժգնութիւնը եւ ողբերգակ դառնութիւնը, մինչդեռ աչքերէն անհունութիւնը որոնող լոյսեր կ'արտացոլան ու մարմինն ալ կարծես ձեւուած է յաւիտենականութեան համար։ Գրիգոր յաւիտենականութեան զոհն է, իրական՝ եւ ուրուատեսիլ, լուսաղբեստ՝ եւ խաւարակուռ. ինչպէս իր գործին՝ նմանապէս անձին մէջ ալ հակա-

սութիւններն են որ կը կազմաւորեն մարդը ու հանճարը։

Տակաւին փոքրահասակ՝ ծնողքէն կը նուիրուի վանական միջավայրի, հոն բողբոջեցնելու իր անմեղութեան եւ պատանեկան սիրոյ խորհուրդը, մենաստանի դաւարուտ միջոցներուն եւ ծաղկալից ածուներուն մէջ, ուր սպիտակափառ շուշաններ իրենց բաժակները կ'երկարեն կաթնաբոյր լոյսին, որ վերէն կը ցնցղիէ դալիութիւն եւ նուազկոտութիւն։ Սակայն Գրիգոր կը նախասիրէ իր խղիկին մերկ առանձնութիւնը, զիշեռային երկնքի մոռյլ խորունկութիւնը, ծովուն միօրինակ երզին տաղաւալի երաժշտութիւնը ու հեռաւոր լեռներու խոժոռ ահարկութիւնը. եւ գլուխը խոնարհած Աստուածաշունչի մազազաթէ էջերուն՝ Յաւիտենականը եւ Անհունն է որ կ'որոնէ, անով լիանալու, անով երանանալու. իր երազանքը ու տեսլականը Յաւիտենականին հաղորդակցութիւնն է։

Այդ ահարկու առանձնութիւնը կը ձեւաւորէ ու կը կատարելագործէ իր մէջ մարդը ու կը հասունցնէ բանաստեղծի խառնուածքը. կը խորցնէ իր հոգւոյն կեանքը եւ հոն կը դնէ Անհունին երջանկութիւնը։ Առանձնութիւնը կը սորվեցնէ իրեն տեսնել, մանրադնին նկատել իրերը՝ բոլոր իրերը, սկսեալ ամէնէն չնչիններէն ու զաղիրներէն, եւ այսպէս վերլուծող մը կ'ըլլայ բնութեան ու տիեզերքի, առօրեայ փոքր դրուագներուն եւ աստղերու երթեւեկութեանց։ Առանձնութիւնը կը սորվեցնէ իրեն խորասուզուիլ իր «Ես»ին մէջ՝ նոր աշխարհներ ու կարելիութիւններ, փնտռելու իր քերթողի տեսութիւններուն, նկարագրողի վրձինին ու հոգեբոլորի թրուիչներուն համար։ Առանձնութիւնը կը ծնանի նաեւ իր մէջ այն ահարկութիւնը, այն սարսափը՝ որ Նարեկի մէջ ստէպ կ'ոգեկոչուի եւ ուսկից կը դալկանայ բանաստեղծը։

Իրապէս Նարեկը մեղի կը ցուցադրէ

տառապագին ապրուած կեանք մը, ուր հոգեկան մրրկայտոյ պայքարներ կը փոթորկեն իր ներքին աշխարհը, վասնզի ահագեցիկ թշնամի մը սողոսկեր՝ կը սպառնայ իր սրբութեան՝ որ իրեն համար ամէն ինչ է, իր էութիւնը, իր վախճանը։ Ինքը սակայն խորասուզուած իր «Ես»ին խորը, հոն՝ ալը դահաւանդին մէջ, կ'ուզէ գտնել Աստուածայինը ի զին ամէն զոհողութեան։ Չենք ալ կրնար ըսել թէ Աստուած ներկայ է Նարեկի մէջ, մանաւանդ թէ ներկայ է միշտ եւ ամենուրեք. ներկայ՝ անդունդին մէջ, ներկայ՝ կատարներուն վրայ. ներկայ է բնութեան իրերու մէջ, ներկայ իր հոգւոյն մէջ՝ անտեսանելի աստղի մը պէս. ներկայ՝ մեղապարտ զգացումներու յորձանքին մէջ, ներկայ՝ իղձերու ու հառաչանքներու ողբին մէջ. Աստուած իր զենիթն է՝ որու կը ձկտի անհրաժեշտօրէն՝ եւ որու ներհայեցողութեան փորձառութիւնը կ'ապրի տուայտանքով. ու երբ իր զգայարանները ու մարմինը խոչընդոտներ կը հանեն իր սրբաքին ու վերելքին, սաստիկ կը չարչարուի ու կը զգայ մարմինին ստորնութեան դառնութիւնը։ Այս պատճառով բանաստեղծը կ'ապրի ողբերգակ մարդու մը կեանքը։ Կը ջանայ բռնութեամբ բանալ «Խորհուրդ»ին դռները ու աստուածային «մթութիւն»ներէն շառայներ ցայտեցընել իր «Ես»ը ճանչնալու եւ լուսաւորելու, կազդուրուելու, սրբուելու եւ վերանալու. այսպէս միշտ ի խնդիր է գերագոյն Լոյսին, Սիրոյն, Ուրախութեան, եւ միշտ ալ կարծես ատոնք կը հեռանան իրմէ ու անհասանելի կը դառնան. այս վիճակէն է իրական ծնունդը Նարեկին, որ մարդկային հոգեկան դոյութեան ճակատագրերը լուծել փորձող քերթուած մը կ'ըլլայ հեղինակի մօքին մէջ. ինծի համար Նարեկ է նաեւ Սիրոյ քերթուած մը, ուր խորհրդապաշտի մը տրամադրութիւնները ամբողջովին եւ անդարձ կերպով կ'ենթարկուին ու կը փո-

խարկուն իրական բանաստեղծի մը զգացողութեանց:

Մինչ Օդոստինոս մը ճշմարտութիւնը կը հետախուզէ իմացական փնտռողներէն ու հետաքրքիր թափառողներէն, որոնք մերթ արուեստակեալ բնոյթ մըն ալ կը ստանան, Գրիգոր Անհունին եւ Յաւիտենականին քաղցով տոչորած, իր բովանդակ էութեամբ, իր յոյզերով եւ անյաղ տենչացումով կը տառապի ի խնդիր Յաւիտենականին՝ իր Սրբութիւն, իր դերադոյն Սէր: Կը զգայ ալ Անոր հպումը, ոչ միայն տիեզերական զեղեցկութեան մէջ, այլ նաեւ իր էութեան խորը, բայց սակայն չի կրնար վայելել Անոր ներկայութեան երանութիւնը եւ հրճուանքը: Այս պատճառով կը տեսնենք ձկտելու եւ վերանալու անվերջանալի ճիւղեր, իր հոգիով, իր սրտով, իր զգայարաններով, ճիւղեր մարմին առած ասացուածքներու կոյտերով ու կրկնութեամբ. ասացուածքներ՝ որ հոգիի թրթռացում են, սրտի զարթոյն, զգայարաններու գունազեղում:

Հետեւաբար Գրիգորի արժէքը կը կայանայ ոչ թէ փիլիսոփայական դադափարի մը ողբերգակ կամ դիւցադներգակ դործողութիւն եւ ներկայացում տուած ըլլալուն մէջ, այլ իր ներքին աշխարհը վրդովող հոգեկան տուամի՛ն քնարերգակ ցուցադրութիւն եւ ձեւ ընծայած ըլլալուն մէջ: Ուրիշներ փորձած են այդ հարցին լուծում մը տալ՝ ներկայացնելով ուղեւորութեան մը ձեւով ու խնդիրը նկատելով իմացական ու բարոյական ընդհանուր տեսակէտներով ու այս պատճառով իրենց դործին տուած են դիտական յորինումներ մըն ալ: Գրիգոր խնդրին կը մերձենայ իր լոկ բանաստեղծ՝ նկատելով զայն պարզ անհատական հարց մը ու միայն բարոյական եւ քերթողական տուեալներով ու յետոյ ամէն ինչ կը կեդրոնացնէ իր «Ես»ին մէջ: Կը փնտռէ իր «Ես»ին մէջ բանալին որ լուծէ այդ յաւիտենական տառապանքին հարցը

ու ծագեցնէ ուրախութիւնը իր հոգւոյն խորը. իր քերթող ալ իր «Ես»ին մէջ կը հետախուզէ իրեր, դէպքեր, ապրումներ, փորձառութիւններ, որ ծառայեն ոգեկոչելու, նկարագրելու, պարզելու եւ երգելու այդ ներքին տուամի՛ն զանազան ելեւէջները:

Բարեբախտաբար Գրիգորի մէջ իրական բանաստեղծ մը կար՝ բառին ճշգրիտ ու կատարեալ առումով, ինքնատիպ եւ ստեղծագործող բանաստեղծ մը, որով իր ներքին տուամի՛ն ցուցադրումը չնաշխարհիկ քերթումով մը յորինուածքը կը ստանայ:

Ինքը չի նմանիր սովորական դրոշմներուն, որոնք իրենց ընթերցումներուն եւ սրբապատմութիւններուն արդիւնքներէն հանած տարրերը ու ատաղձները իրարու յարակցելով եւ անձնական փորձով ստացած մէկ քանի դիժեր ու դոյներ իրարու խառնելով մարմին կու տան էականերու, որ կը շարժին ու կը դործեն, որոնց կեանքը սակայն կը նմանի բնալուծարաններու մէջ մեծ աշխատանքով ու տաժանքով եւ երկար ատենի ընթացքին ձեռք բերուած կեանքի մը՝ դալկադէմ ու սակաւատեւ: Գրիգորի մէջ կեանքը ժայթքում մըն է, արդիւնք անդիմադրելի ոյժի եւ կենսունակութեան. ստեղծելը իրեն համար շատ բնական արարք մըն է. իր ներքին դործութիւնները միշտ ծփուն եւ շարժուն վիճակի մէջ են ու օժտուած անչափ արդաստուրութեամբ: Դարբնել, կերպաւորել, մարմնացնել, կենդանացնել իր դադափարները, իր տեսիլները, իր տեսնելու եւ ըզզալու ձեւերը, որոնք ծայր աստիճան ինքնատիպ են, կը մղեն զինքը համապատասխան ասացուածքի ալ ինքնատիպ ձեւեր հնարելու: Հարեւանցի ընթերցում մը իր դործին կարծել պիտի տայ թէ ինքնատիպութիւնը աւելի դրելու ոճին մէջ կը կայանայ, ոճ մը առանձնայատուկ եւ եզակի: Ամէնէն ընդունուած է արտայայտութեան այդ նորորինակ ձեւը Նարե-

կացիին մէջ. կարծես Նարեկի լեզուն ալ իր բանաստեղծութիւնը ունի. լեզու մը կազմուած նորակերտ բառերով, չմտած ու զուգորդութիւններով, փորագրական եղբներով, փնտռուած կապակցութիւններով. եւ այս բոլորը յորդազեղ՝ բայց ինքնաբուխ կերպով ներկայացուած: Սակայն հարցը կը համարիմ աւելի բարդ է ու խորունկ: Գրիգորի մէջ ինքնատիպ ու եզակի է քերթողական միտքը եւ աշխարհը: Մօտենալով հանդերձ գրական նիւթի մը՝ որ սովորական է ու սահմանաւորուած իր խորքով, իմաստներով եւ կառուցումով, ինչպէս են աղօթքները, ինքը կը վերամշակէ բոլորովին նոր ոճով ու կը դնէ սովորական բանաձեւերու եւ դադափարներու տեղ, իր հոգւոյն պատմութիւնը, իր ներքին տուամի՛ն՝ զոր ապրած էր ու դեռ կ'ապրէր Նարեկը յորինած լուծումներէն. այդ տուամի՛ն ալ կը նկատէ ոչ թէ միայն հաւատացեալի ու հոգեւորականի մտքով, այլ քերթողի մը աչքերով եւ զգացումով: Այս պատճառով Նարեկը կարգացած ժամանակ լուսաւորուելէ ու վերադադարեալներու տեղ, կ'արտաստենք, նալէ աւելի կը յուզուինք, կ'արտաստենք, կը հեծենք, կ'երգենք. քերթողն է որ ուղղակի կը խօսի մեր սրտին եւ ինչպիսի՛ յուզումով եւ կեանքի պոռթկումով: Արդէն Նարեկի առաջին բառերը մեզ կը գետնէն հոգիի մը առջեւ, որու մէջ փրփրաբար կ'անցնէ իր միշտ պոռթկալու վիճակի մէջ է ու մարդը՝ անկարող դիմադրելու անոր յորձանքներու բռնութեան, կը ժայթքէ իր սրտին ազդակը. «Ձայն հառաչանաց հեծութեան սրտի՛ ողբոց ազդակի քեզ վերնծայեմ տեսողդ դադափար»։ Երբեք հայ միտքը այսքան կենսունակութիւն ցոյց չէր տուած: Բանաստեղծի մականին հպումէն զգացումը կը կորսնցնէ իր մարդկային ազգատուութիւնը. նմանապէս դադափարը կը կորսնցնէ պատշաճական ու կամայական ամէն տարր, եւ զգացում ու դադափար կ'ըլլան

տենդոտ կեանք, ժայթքող կենսունակութիւն, արծիւի սլացք: Երկրաւոր տկար ու սովորական իրերը ինչպէս նաեւ եղծանելի երեւոյթներն ու կենցաղի փոքրիկութիւնները կը չքանան, ու կը լսենք միայն սիրով սարսափող հոգիի մը բարձրագոյն եւ անհատում ազդակները:

Գրեթէ ամբողջ ուրու եւ մանրամասն տեղեկութիւններ հասած չեն Գրիգորի անձին, նկարագրին, կեանքի դրուագներու նկատմամբ, եւ որոնք կարելի է արուեստագէտ մը ճանաչուած համար: Սակայն իր գրական դործը մեզ կը դնէ իրական բանաստեղծի մը առջեւ, ինչպէս ըսուեցաւ:

Գրիգոր բանաստեղծ կը յայտնուի ամէնէն առաջ կեանքին մէջ. ոչ թէ միայն խառնուածքի բերումով ու ստեղծագործման զօրութեամբ, այլ բանաստեղծ է սիրով ու անմեղութեամբ զեղուն սրտի մը այն candeurով, որ ազնուաշունչ հմայք մը կ'ընծայէ իր նկարագրին եւ խառնուածքին, որով եւ կեանքը իրեն համար կ'ըլլայ արուեստի պարզեւ մը. ինքն ալ ամէնօրեայ իրերու եւ դէպքերու մէջ կը գտնէ զեղեցկին շնորհքն ու փայլը. ժողովրդական զրոյցները կը զգացնեն մեզի այդ խորհրդաւոր օժումը: Հետեւաբար Գրիգոր բանաստեղծ է ոչ միայն ինչ ինչ առիթներու մէջ, երբ աւելին յորձանք մը կը բարձրացնէ իր հոգին անդիմադրելի սաւառնումով եթերային ոլորտը, եւ իր էութեան խորն ալ արտաքին աշխարհը նոր լինելութիւններու կարելիութիւններով կը ներկայանայ, այլ բանաստեղծ մը կը յայտնուի միշտ, կեանքին ամէն իրերու եւ դէպքերու մէջ ամէն բանի նայելով արուեստագէտի աչքով, ու երբ արտաքին աշխարհը կը խուժէ ներս իր էութեանէն՝ ամէն բան իր աչքերուն եւ հոգւոյն մէջ բանաստեղծական լինելութիւն դառնալու համար է:

Ի՞նչպէս յանկարծ բանաստեղծական այդ կարողութիւնը յայտնուեցաւ իր մէջ,

մեր ունեցած տուեալներով անկարելի է ճշգրտել: Արդեօք հին աղնուական արիւնի մը յետին պարտաւորած զա՞րկն է որ տակաւին կ'արձագանգէր իր մէջ, թէ Նարեկ վանքի ծառայիտ դաւարեքը, կամ Բղնուհեաց ծովի դարաւոր կրկներգը, կամ շրջակայ բնութեան վայրագ գեղեցկութիւնը իր հոգիին մէջ դրին անհունին տենչը, գոյներու զգացողութիւնը, երգին թրթռացումը. բանաստեղծութեան գեւը, որ կը վերացնէ ու կը գեղեցկացնէ մարդկային ճակատագիրը. միշտ ալ թաքուն խորհուրդ մը կը մնայ իր յայտնութեան մէջ:

Եթէ ծագումը անյայտ եւ անտեսանելի է մեզի համար, յայտնուելու եղանակը ոչ միայն կը պարզուի մեր մտքին առջեւ, այլ կարծես նոյն բանաստեղծութեան գեւին ներկայութիւնը կը զգանք մենք ալ մեր մէջ՝ դոնէ ինչ ինչ ժամանակներ: Ընդհանրապէս բանաստեղծութեան իրը կենսական տարր կը նկատեն զգացումը: Սակայն պէտք է ըսել թէ զգացումը բաւական չէ բանաստեղծական վիճակ մը բացատրելու անձի մը մէջ: Rilke կը հաւատայ որ կարելի է բանաստեղծութիւնը նկատել լոկ զգացում. բանաստեղծութիւնը փորձառութիւն է, կը յայտարարէ ինքը, մանաւանդ թէ ուղղակի արդիւնք է փորձառութեան. հետեւաբար բանաստեղծ անձին համար անհրաժեշտ է տեսնել՝ տեսնել ամէն ինչ. պէտք է զգալ, պէտք է մտածել, պէտք է վերլուծել, երազել: Սակայն ասոնք ալ բանաստեղծութիւն դառնալու համար, հարկաւոր է քերթողին մէջ փոխարկուին եւ ըլլան միտ, արիւն, նայուածք, յուզում, դործ. պէտք է ասոնք անբաժան կերպով կազմեն քերթողին անձը, ու այն ատեն միայն բանաստեղծութեան արեւը կրնայ ծագիլ անձի մը հոգիէն: Բանաստեղծութեան ստեղծագործ վսեմութիւններուն հասնելու համար անհրաժեշտ է ուրեմն նախ անցնիլ կեանքի ամէն պատահարներէ, տեղերէ ու ժամանակներէ, եւ ազգա-

ւոր ու պարագայական իրերն ու դէպքերը աստիճաններ կազմելով բարձրանալ դէպի կատարը:

Կեանքի փորձառութիւնը անհրաժեշտ եւ հիմնական տարր է քնարերգութեան համար, որովհետեւ զանազան պարզութիւններն որ կը ստեղծեն քերթողին մէջ համապատասխան զգայութիւնները ու բանաստեղծութիւնը զգայութիւններու կենդանացում եւ հոգիացումն է: Գրիգոր ապահովաբար երկիրներ շրջապատած է, տեսած է ժողովուրդներ ու ցեղեր. հաւանորէն իր մենաստանի շրջապատէն դատ ուրիշ միջավայր է ճանչցած: Սակայն Նարեկը լեցուն է կեանքի փորձառութեամբ, լեցուն է աշխարհի իրերով, մարդուն խոր ծանօթութեամբ, իրերու ուղղակի տեսութեամբ, բազմազան տեղեկութիւններով, զոր չենք գտներ ուրիշ քերթողներու քով եւ որոնցմով կը ցուցադրէ հեղինակը կեանքի խոր եւ ընդարձակ փորձառութիւն: Հոգիով ապրած է կարծես բազմաթիւ կեանքեր, ոչ թէ վերացական ու երեւակայալ կերպով, այլ զգալի եւ շօշափելի ձեւով, իրը անձնաւորեալ եղելութիւններ: Համամարդկային, մանաւանդ թէ տիեզերական ամբողջական կեանքն է որ կը յայտնուի այդ վանականին մէջ իրը ճանչցումը գիտութիւն, իրը ապրումը փորձառութիւն. ամէն բան կարծես իր զգայարաններով տեսած, շօշափած ու մտքով լրիւ ըմբռնած է: Այսպէս արտաքին աշխարհի բոլոր իրերը իր էութեան մաս կը կազմեն. ամէն առարկայ, ձեւ, նիւթ, արծաթեայ շղթայով իրարու զօդուած անվերջանալի պսակ մը կը բոլորեն իր շուրջ, եւ միջոցը իր աչքերուն եւ մտքին առջեւ կը լեցուի այդ իրերով ու ձեւերով: Իսկ ինքը կը բնորոշէ ասոնց շրջանակը, դիմերը եւ գոյները, ամբողջութիւնը: Իրապէս իր մէջ զգայականութիւնը ծայր աստիճան դիւրապարկութիւնով, կրցեր է անդրադառնալ եւ ար-

ճանադրել իր «Ես»ին մէջ ամէնէն խուսափուկ թրթռացումներն ալ՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցած ատեն: Ասկից Նարեկի մէջ առարկաներ ու իրեր բազմաթիւ եւ այլազան են, նոյնիսկ հոգեկան վիճակներ պատկերացուցած միջոց: Այս զգայականութիւնը՝ քերթողական տարազով արտայայտուելով, կու տայ մեզի ճայնական անհամար contrepointներու բարդ ձեւեր՝ որ նմանապէս Նարեկի տիրող տարրերէն մին կը կազմեն:

Պէտք է նկատել նաեւ որ այդ բոլորը իրեն համար կը դառնան հոգեկան կեանքի բացայայտիչներ եւ կ'առնեն իր ներքին վիճակին դիմադիմը. հետեւաբար ընդհանրապէս ամէն բան կը ներկայացուի թանձր եւ մութ գոյներով, աղջամուղջներու եւ փայլակումներու յորձանքի մը մէջ, ահաբեկիչ կերպարանքով՝ երեւակայական բանդալուշանքներու պէս: Մըրկալից ուլկէան մը՝ որու լեռնաձեւ ալիքները յուշանդրիներու նման կը բարձրանան խաւար երկնքին ներքեւ: Շատ մութ է հոգին, որ կը յառաջէ իր ուղիէն՝ կարծես անձանթ նպատակին, եւ ճամբուն երկայնքին ամէն կողմ կը տեսնէ բացուիլը մութ եւ ժահահոտ ճախճախուսներու, որոնց վրայ յանկարծ յայտնուող չիկակարմիր երեւոյթներ սարսաղեցիկ երկինք մը կը ստեղծեն. իրապաշտ պատկերը իր ներքին կեանքին, որ կրօնական հայեցողութեան ամբարար անդորրութեան տեղ՝ փոթորկայոյց եւ տառապալին բան մ'ունի եւ ամենեւին չի զգացներ երկնքի պայծառութիւնը: Մարդկային բոլոր կրքերը, բուռն զգացումները, երեւակայութեան վրդովիչ երեւոյթները կը դառնան խոշտանդուած պատկերներու զուգորդութիւններ եւ փրփրոտ ձայներու ահագանդ, ու քերթողին մէջ ցաւատանդ պրկումներով եւ արհաւիրալից ողբերով կը յայտնուին. բանաստեղծը ասկից աւելի ճշմարտապէս մարդկային կեանքը է՝ կարող ապրած ըլլալ: Rilkeի հետ ինքն

ալ կրնայ ըսել. Բոլոր իրերը ինձի աւելի մտերիմ եղան ու ամէն ձեւ աւելի յստակ եւ բացայայտ երեւցաւ իմ աչքերուս:

Այս ամէնը մեզի ըմբռնել կու տայ իր բանաստեղծութեան էութիւնն ալ: Ասոր համար աւելորդ է բանաստեղծութիւնը կազմող արտաքին տարրները նկատել, եւ որոնք չեն որ բուռն բանաստեղծութիւնը կը ծնանին. բանաստեղծութիւնը ներքին, հոգեկան զօրութիւն մըն է եւ իր մէջ անբաժանելի, զոր կը զգանք ու կ'ըմբռնենք ալ դուցէ, բայց դժուարին է տարբարադրել: Գրիգորի մէջ բանաստեղծութիւնը հոգեկան կեանքի մը թափն է բուռն եւ հաղորդական, եւ զայն արտայայտելու համար զործածուած բառերն ալ կարծես անկարող են պարունակել եւ իր լրութեամբ հաղորդել մեզի. այդ բանաստեղծութիւնը իր հոգին է, մարդկային համատարած հոգին որ կը հոսի մեր մէջ փայլակումներու լուսեղէն մըրիկով ու կը դնէ անսահման միջոցի մը զգացումը. իր սիրոյ՝ ամէնակէզ սիրոյ ճենճերումն է որ իբր տենդալին եւ այրող յոյզ կը տապացնէ ամբողջ էութիւնը եւ կը հրկիզէ. իր չիրականացած երազներու խայթող խաբկանքն է. հանդէպ Անհունին իր անյագ քաղցն է, որ մեզ կը մօտեցնէ Անհունին:

Գրիգոր իր առջեւ բանաստեղծութեան իրը օրինակ ունէր Աստուածաշունչինը (մանաւանդ Սաղմոսներու) եւ մեր Եկեղեցականը. չեմ համարիր որ պարսկականը ճանչցած ըլլայ. բայց չի հետեւիր ո'չ մէկուն եւ ոչ միւսին. ոչ Սաղմոսներու թէեւ պատկերոտ՝ բայց պայծառաշող, բարձրաթուիչ ու մարդուն մէջ խոր անդորրութիւն մը ծնանող քնարերգութեան, ոչ ալ մեր Շարականներու փափուկ պատկերներով եւ թարմ զգացումով հիւսուած դաշնակաւոր բանաստեղծութեան. ինքը կը փնտռէ ուրիշ մը ատակ իր հոգիին, խառնուածքին, քերթուածի նիւթին. քնարական՝ բայց ողբերգակ վիճակ մը նկարա-

դրելու յարմար բանաստեղծութիւն՝ ուր կարենան երգութիւն մարդկային կրքերը, ստորաքարչ հակումներու եւ շարժումներու ժխտը, խօլական ցնորքներու նուազը, մարդու էութիւնը տառապեցնող ցաւին խայթը. բոլորն ալ վերանցական ու յաւիտենական դարձած. եթէ կ'ուզէք, սատուրնեան զգացումը՝ հեթանոսական մրտաբու: Սակայն Գրիգոր այնպիսի բնական ու անկեղծ պարզութեամբ եւ candeurով կ'երգէ այս բոլորը որ կարծես քրիստոնէացած են: Մէկ խօսքով մարդկային հոգին, միշտ միեւնոյնը հաղարաւոր տարիներու ընթացքին, իր էութեան եւ զինքը հարուածող յաւիտենական ցաւին մէջ, վայրաքարչ տիղմին ու ամբիժ երկնքի մը միջեւ կեցած իր ճիգերուն մէջ. իր մարմինն եւ հոգին անվերջ պայքարին մէջ: Որով իր բանաստեղծութեան բուն կեդրոնը, ինչպէս նաեւ իր անձնականութեան հիմնական նկարագիրը տուողը, բարոյական հարցն է. այդ հարցն է որ իր բանաստեղծութիւնը կ'էացնէ, կը լիացնէ, կը բարձրացնէ եւ փնտռել կու տայ իրեն Կեանքին աղբիւրը:

Իր արուեստի տեսլականն ալ Գեղեցիկը չէ, այլ իրականութիւնը եւ արտայայտութիւնը. իրապաշտ ըլլալ եւ ցայտուն արտայայտել: Որով կը հետապնդէ միշտ ինչ որ ճշմարիտ եւ իրական է, նոյնիսկ տղեղութեան յանդուլու աստիճան. ասկից ամէն բան նիւթականացնելու, խտացնելու, զգալի եւ չօշափելի ընելու իր տիրող ձկտումը. նմանապէս չափազանցելու միտումը. այս չափազանցութիւնը սակայն մեղի անբնական չ'երեւիր, այնքան մեծ է անկեղծութեան եւ ինքնարուխ ըլլալու շնորհը, զոր ինքը կը դնէ այդ զգացողութեանց եւ նկարագրականներու մէջ: Ամէն բան զօրեղապէս զգացնելու իր դիտաւորութիւնը զինքը կը մղէ նոյն դադափարին կրկնութեան, ինչ որ առաւելութիւն մը չէ. դարձեալ աւելի աղբիւրի ըլ-

լալու նպատակը զինքը կ'առաջնորդէ մակդիրներու կուտակումներու եւ նորօրինակ բարդութիւններու, որոնք մեր գեղեցկագիտական ըմբռնումներուն չեն համընթանար. սակայն ասոնք լոկ արուեստագիտական թերութիւններ կը դառնան այն թափանցող, աղող, խուժող, փոխարկող զօրութեան քով՝ որ Նարեկի տողերէն կը ծնանի ու կը մտնէ հոգւոյ մէջ եւ զօրութիւնները կը համակէ: Բառ, պատկեր, դոյն, նկարագիր, ասոնք հաղիւ զգայաբանքներու առջեւ կ'ուրուագծուին, վասնզի քերթողի հոգին այդ տողերով արդէն իսկ տիրացեր է վրադ ու քեզ յայնչտակած. նմանապէս բառերու ձայներէն ծաղած երաժշտութիւնը պարզապէս թոյլ արձագանքն է այն նուագերին՝ որ քերթողի հոգւոյն մէջ հասունցած եւ ծաւալած է: Բանաստեղծ եւ ընթերցող մարդկային միեւնոյն յոյսերու, զգացումներու, շարժումներու, յոյսերու եւ ապրումներու փոթորիկին մէջ կը պտուտքին անվերջ կերպով:

Սակայն ասով չեմ մերժեր Նարեկի մէջ Աստուածայինին զգացումը որ Գրիգորի՝ իրր խորհրդապաշտի գլխաւոր նպատակը եւ վախճանը պիտի ըլլար. բայց իր մէջ մարդկային զգացողութիւնը եւ բանաստեղծական թափը դերադոր ներշնչումի աղբիւրութեան ներքեւ իր քերթողական կարողութեանց սանձարձակ ազատութիւն տուին մերկանդամ նկարագրելու մարդկային «Ես»ը եւ կեդրոնանալու անոր վրայ:

Կ'ընդունիմ մանաւանդ՝ թէ բանաստեղծին դիտաւորութեան մէջ Նարեկը պիտի ըլլար լուսաւոր ու շքեղ արշալոյս մը առաջնորդող անմար միջօրէի մը, ուր մարդկային հոգին՝ անդորր եւ պայծառ խաղաղութեան մը անհունութիւնը պիտի ճաշակէր յաւիտենական Գեղեցկութեան փայլին մէջ, անմեղութեան եւ սիրոյ մը նոլորտի մը մէջ ծլած ծաղիկներու բու-

րումով: Բայց Նարեկ իր այժմեան ձեւով լոկ մեկնակէտ մըն է կամ միջոց մը. բանաստեղծին բուն նպատակն էր նկարագրութեան արտաքին իրերէն, ձեւերէն, երեւոյթներէն շուտով վերանալ եւ յանդիլ զանոնք դոյացնող ու կենդանացնող ամէնազօր ու համապարփակ Կարողութեան, եւ այսպէս դնել իր քերթութեան մէջ ոչ թէ միայն Անհունին եւ Յաւիտենականին տենչը եւ ձկտումը, այլ լիութիւնը եւ երանութիւնը՝ Սէրը, հրճուանքը. հաւանորէն այդ երանութեան եւ հրճուանքի զմայլումը վայելած էր իր վերացումի եւ յափշտակութեան լուսայեղծ պահերուն. իսկ այժմ կը ճենճերէր անոր յիշատակով: Եթէ այս դիտաւորութիւնը չիրականացաւ ու մեղի փոխանցուեցաւ Նարեկը այժմեան ձեւով, պիտի ըսեմ որ հայ Գրականութիւնը կորուստ մը չունեցաւ, մանաւանդ թէ ճոխացաւ դրական անդուգական դոհարով մը՝ ինչպէս է Նարեկը, որ միակն է բոլոր գրականութեանց մէջ. մինչդեռ զուտ խորհրդապաշտ քերթութեանը չեն պակսիր մանաւորապէս արեւմտեան գրականութեանց մէջ:

Որով Նարեկի մէջ կը պակսին կամ հաղուադիւտ են սիրոյ, դերբնական սիրոյ անայլայլ ու զուարթ յայտնութիւնները, այն սիրոյն որ միշտ ալ՝ նոյնիսկ խորհրդապաշտներու մէջ, կարելի է ըսել որ կը յայտնուի իրր տեսակ մը խենթութիւն: Պոսիւէ երկրաւոր սիրոյ վրայ խօսած Ժամանակ կը նկատէ զայն «յայտնի խենթութիւն մը եւ բոլոր խենթութեանց ամէնէն խենթը»: Սակայն սիրոյ տեսակը եւ արտայայտութիւնը եղանակը չեն փոխուիր առարկային փոխութեամբ. իրապէս ինչ ինչ խորհրդապաշտներու մէջ սիրոյ յայտնութիւն ձեւերը կարծես անտրամաբան բան մ'ունին: Նարեկի մէջ, ըսի, այդ յայտնութիւնները չկան կամ հազուադիւտ են. Նա-

րեկ սիրոյ քերթութեան մըն է իր ծագումին, առիթին, գաղափարին մէջ եւ պէտք էր յանդիլ հուսկ այդ սիրոյն: Իրականին մէջ եղաւ մարդկային ողբերգութեան մատեանը, հոգիի մը կրած փորձերուն, պայքարներուն, թողլքութիւն եւ տառապանքներուն նկարագրական եւ նուազող քերթութեան, զետեղութեան սրբազան եւ ոչ սրբազան աշխարհներու միջեւ, հաղորդուող երկուքին ալ կեանքերու աւելին. մերթ լուսաւորութեան երկրի տղամոտ ու խաւար ալքերուն ուսած երկրի տղամոտ ու խաւար ալքերուն մէջ. քերթութեան մը ուր աւելի խաւար կայ քան լոյս, ուր աւելի տանջանք կայ քան հանգիստ, ուր աւելի ցաւ կայ քան երանութիւն, ուր յաճախ երկինքը չի տեսնուիր՝ բայց եթէ տանջանքի առարկայ եւ գրգռող ըլլալու համար, ուր Աստուած ներկայ է, բայց թողած մարդս իր կիրքերու փոթորիկով ու կէտնին մէջ որ մաքառի, կրէ, տուայտի, իյնայ, մնայ միշտ փրկուող մէջ եւ ըմբռնէ որ սողացող էակ մըն է ինքնիր մէջ այս աշխարհի վրայ: Հեղինակը միշտ կը տարուբերի այս զուգահեռ միջոցներու անընդհատ մէջ կարծես իր հոգւոյն մաքրագործութիւն համար:

Սիրելի է ինծի նկատել այն պահը, երբ Գրիգոր ամբողջապէս վերջացուցած իր Նարեկ = Մատեան ողբերգութեանը, եւ պատարագի զոհը կատարած միջոց «Կենարարին յիշատական միշտ ճենճերիմ...» խօսքերը արտաբերելով, սկսած ըլլայ յօրինել իր մտադրած «Նարեկ»ը, իր անմեղ եւ հանգստացած հոգւոյն կաթողիկէն, դերբնական սիրոյ, բոլորական յանձնումի, Աստուծոյ հետ կատարեալ ու սերտ միութեան իր հրեշտակային քերթութեանը՝ երկրին մէջ մշտնջենապէս ծաղկեցնելու համար:

Հ. Կ. ՔԻՊԱՐԵԱՆ

ԻՐԱՆԻԱՆ ՔԵՆՈՒՄԱՆ

